

## Տ. ԱԲԵԼ ԱԲԵՂԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(ավազանի անունը՝ Էդգար)

Ծնվել է 1966 թ. հոկտեմբերի 27-ին, Իրաքի Զախո քաղաքում:

Սովորել է Զախոյի միջնակարգ և երկրորդական վարժարաններում:

Բաղդադի Ամերիկյան մշակութային կենտրոնում հետևել է անգլերեն լեզվի, իսկ «Բաբելոն» քոլեջում՝ աստվածաբանական ու իմաստասիրական դասընթացներին: Մասնակցել է նաև Բաղդադահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի կազմակերպած հնգամյա դասընթացներին՝ սովորելով հայոց լեզու:

1996 թ. հունվարի 1-ին, ձեռամբ Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի, ստացել է սարկավագական աստիճան:

2000 թ. մարտի 2-ին ձեռամբ Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: